

# ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԴԵՎՏԵՄԲԵՐԻ 17-ին. Թիֆլիս. № 51.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԸ ԵՒ ՆՐԱ ԻՐԱԿԱՍՈՒՆԵՐԸ



ՅԱՒԵՆԻՍՈՅԱ Քարոսներ, դուք ինձ ծառայելու համար՝ էլ միջոց և ձև չթողի՛ք, որպէսզի իրաւասու ընտրէիք, այժմ ընտրւեցաք—դէ լաւ, ձեզանում կան և պիտանիներ և անպիտաններ—բայց տեսէք, եթէ իմանամ, որ դուք ձեր խոստումները լաւ չէք կատարել և այս անգամ էլ ինձ խաբել էք ու ձեր շահերը ի նկատի էք ունեցել, քան թէ իմ՝ հաւատացած եղէք, որ «կպրէ» կարասի բաժին կըդառնաք:

Բ ա ց ռ ա ծ է ք ա ժ ա ն ր դ ա գ ր ո շ ք ի ՚ ն

1912 թ.

VII  
Տարի

Մ Ա Թ Ա Բ Ա Լ Ա

VII  
Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

[Ամենամանհրաժեշտ թերթը հայ ընտանիքների համար]

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» միակ հայ թերթն է, որ գոյնզգոյն նկարում է մեր գործիչներին:

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» հրատարակում է ուսական եւ երոպական իւսօրիստիկ լուսագոյն թերթերի օրինակով եւ ո՛վ գարձանք՝ հայկական կեանքում:

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շարունակում է այս տարի էլ իր աշխատակիցների հետ ազգակցական կապեր պահպանել եւ նրանց մասնակցութեամբ ծաղր ու ծանակի դարձնել նրանց՝ որոնք ծաղր ու ծանակի արժանի են:

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ:

ԽՆԱՄԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՆՈՑՆՊԷՍ

ԿԱՇԱՌԻ ԵՒՍ ԱՌԱԻԵԼ:

1912 թ-ին էլ մեր մշտական աշխատակիցներն են լինելու՝

ԳՐԻՉՆ ՈՒ ԹԱՆԱՔԸ, ՆԵՐԿՆ ՈՒ ՀԱՆԱՔԸ

Առաջիկայ 1912 թ-ին մենք մեր բոլոր բաժանորդներին խոստանում ենք՝

1. Ամեն շաբաթ դարդոտ ժամանակ կուշտ ծիծաղեցնել:
2. Վշտերը փարատել—
3. Մարտողութիւնը կանոնաւորել (կուշտ ծիծաղելով):
4. Մեր գործիչների իսկական պատկերների հետ ծանօթացնել:
5. Ամեն ցաւ ու դարդից, չար ու վշտից հեռու պահել:
6. Փողը ստանալիս՝ անդորագիր տալ:
7. Հանդերձեալ աշխարհում Մէֆիստոֆելի միջոցաւ ցանկացողներին ումանց դժողք, ումանց արքայութիւն առաջնորդել:
8. Իսկ անպարտաւճանաչ եւ պարտքերը չվճարող բաժանորդներին եւ գործակալներին ՉԱՐԱՄՏՕՐԷՆ ՍՆԱՆ-ԿԱՑԱԾ յայտարարել:

Այս բոլոր առաւելութիւնների համար «ԽԱԹԱԲԱԼԱՆ» գնահատում ենք՝

Տարեկան 5 թուրքի, կես տարին 3 թուրքի

Երեք ամիսը 1 թ. 50 կ. եւ ամիսը 50 կոպ.:

Մեր ուղղամիտ բաժանորդներին առաջարկում ենք բաժանորդագրւել նաև «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» ամենօրեայ գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական թերթին, որի գինն է տարեկան 10 թ. կէս տարին 6 թուրքի

Իսկ „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ և „ԽԱԹԱԲԱԼԱՆ“ միասին

Տարեկան . . . . . 12 թ.

Կէս տարին . . . . . 7 թ.

«Սուրհանդակը» անհրաժեշտ է նամանաւանդ առևտրականներին

Բ Ա Թ Ա Ն Ո Ր Դ Ա Կ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը Ա Ռ Ա Ն Ց Ս Ա Կ Ա Ր Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

Մեր հասցէն՝ Կոստանտնուպոլիս „Ճամաթա“.

ՅԻՄՈՅԵՅԷՈ  
ՅՈՑԷՈՒՄՈՅՅՅ

Կ Ո Ն Գ Ա Կ Ն Ե Ր

**Գասպար**

ծառայ և աղա ազգին  
Հայոց և հասանելի կամօքն «Խաթաբալայի»  
ուստաբաշի համայն ծիծաղասիրաց ու հա-  
նաբշիաց, սկզբունքով հակառակ քծնողաց  
և խաչագողաց հայոց մեծաց—այլ և ընդ-  
հանրական զրօշակակիրն մերոյ սուրբ և զուս-  
յեղափոխական կուսակցութեան՝

Ա մ ե ն ա պ ա տ ի ռ



Շնորհք, ծիծաղ եւ ուրախութիւն տամք՝

Համայն մեր ողջամիտ ընթերցողաց և  
կովկասեան Հայոց Բարեգործական  
ընկերութեան պատւարժան նախագա-  
հին, արժանայարգ վարչութեան ան-  
դամներին, բարեպաշտօն նւիրատունե-  
րին և ժլատ անդամներին. ամէն.

Ընկերներ եւ քաղաքացիք.

Այսօր տօն է երեսնամեակի պատ-  
ւական Ընկերութեան, ուրեմն և տօն  
է աղքատաց և զրկելոց — քանզի գի-  
տեմք թէ բարեպաշտօնդ՝ Դուք, այսօր  
ամենայն աղքատաց արցունք լանա-  
լոց էք և զրպանք ու փորք լցուցանե-  
լոց էք:

Բաս չէ. այս է արածն անխոտելին:  
Վասն այսօրիկ շնորհեմք զգերաշնորհ  
և զեռանդազին նախագահին ընկերու-  
թեան զպարոն Սամփոսնի Ստեփանիչ  
Յարութիւնեան զտիտղոսն աղայու-  
թեան և յղեմք անւամբ նորա 5 և 1/2  
միլիօն վասն զպրօցաց վարժապետաց,  
ծառայողաց, ընթերցողաց, ուսանողաց և  
պատւիրեմք զի մի-մի անգամ էլ աղ-  
քատաց, հիւանդաց և նրանց յի-  
շեսցէք, և զբամական նպաստն նրանց  
ևս բաժանեցէք, քանզի ի մէջ սոցա-  
կան այնպիսիք, որք գործել ոչ կարեն,  
մուրալ ամաչեն, և աղքատ են ու հի-  
ւանդ ուստի և խնդիր ոչ կարին մա-  
տուցել ձեզ:

Գասպար աղա Կալասուզով  
Խաթաբալա ամենայն հայոց  
Դարդուբալա ազգային գործչոց

II

ԱԶՆԻԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ,  
Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ  
ԲԱԳՐԱՏ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Անկասկած այսօրեան տօնը ամենէն  
առաջ Քո տօնն է, ուստի և պատւի-  
րեմք, ի բողջէդ գեղեցիկ ծաղկէ փսակ  
մի հիւսել և գլխիդ հագցնել ի կողմա-  
նէ մեր. վասն զի, Դու աւել արժանի  
ես յարգանաց և պատւի վասն բարե-  
գործակտնի կանկեղծ սրտով կասինք  
այս—որպէսզի երբ մենք մեռնելոց  
իցեմք զմեզ լաւթաղեցէք. ամէն:


Գասպար աղա Կալասուզով

**ՏԵՐ ՏԵՐ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ**

Ընտրւեց ի գահ կաթողիկոսութեան

13 դեկտեմբերի Էջմիածնի Համազգային ժողովում






ՅԵՐԿԱԿԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԽՆԴՐԻԸ

(Բարձրագույն դասարանի սովորողների կողմից պատրաստված և հրատարակված)։

«ԽԱՔԱՔԱՔԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ԻՆԿՏԵՄԲԵՐ 31 օր



Суббота ՉԱԲԱԹ Ծաղատո  
Լուսնի 10

ԳՈՒՇԱՆՈՒԹԻՒՆՔ ՕՐԱՑՈՅՑԻՍ

18 (կիր.) Զինութեան գործն Քամոյեան  
եկեղեցւոյ տարտեացի և տուաշին պատարագն  
մատուցանիցէ քաշալ Տիգրանն:

19 (բ. 2.) Խմբագրութիւնքն պղպտիկ բա-  
ժանորդագրութիւնս իւրեանց տոկոսներով ստա-  
նայցեն և բազում սազնեայ բշտիկս արձակեցեն  
վասն 1912 թ.ին:

20 (գ. 2.) Յանքան գեղացոց և հունձն  
տէրտէրաց առաւ եղիցի, վասնորոյ վերջինների  
փորի հաստութիւնը 2 սանտիմետր բարձրացի:

21 (դ. 2.) Առևտուրն դասաբաց պահուսեցի,  
քանզի բոլոր հայ-քրիստոնեայն զայդ օրն պաս  
պահեցան:

22 (ե. 2.) Խմբագրութիւն հայոց պոռտի անի-  
ցին, քանզի պայքարն կաթողիկոսական ընտրու-  
թեան աւարտեալ է:

23 (ուրբ.) Մի խումբ ինվալիդ օրիորդաց  
ընկերութիւնս կազմեցին, որոց բերօն գոտա-  
նիցէ ի Գալաթիսիկ պրօսպեկտ:

Աստղ. տօմար. և օրացոյցագէտ

Փարեմուզ

ԱՌՉԱՆՈՒԹՈՂ

Իփոր Աստուծա՛ ուզում է մէկին  
պատժի, չէր խիթն է հանում, իժում  
աչկը:

Էս փիլիսոփութիւնը աշխրբի էն հին  
օրիցը մնացիլ է, ու մինչկը հիմի էլ  
մնում է:

Մարթ կայ, վուր քոռ աչկերով ուփ-  
րօ շատ է տեհնում, քանց թու լիս  
աչքաւուրնիրը:

Մարթ էլ կայ, վուր խիթ չունէ,  
համա՛ իղբալ ունէ:

Ա՛յ հիմա, բաս Աստուծա՛ կու վիկալ-  
նէ՞, վուր՝ իս էստի ըլիմ նստած ու  
Սուլթանը կի Ստամբուլում:

Չէ, չի վիկալնի, չունքի՛ Սուլթանը  
ծնած օրեմէն Ստամբուլումն է, իս կի  
իսկի մէ ջէր էլ չիմ տեհի. բաս վուր  
տեհնիմ Ստամբուլը հոքու վարձք չէ՞:

Էս էլ չի, ուրիշը վիկալնիրը:  
Չիմի վուր Աստուծա՛ էնէնց անէ, վուր

մէ լաւ բախտի արժանացնէ միգ. փիս  
բան կուլի՞. լաւ կուլի իս ու իմ հո-  
քին գիղենայ:

Մէ մարթ վուր օրեկան իրիք թա-  
ւուր սփաթը փօխէ—սա էլ փիս չէ ան:

Դուք տեհիլ լ՛ք աղչկիրք, թագա  
մօզնի աղչկիրք, վուր շուրիբը օրէնը  
չուրս-հինգ ջէր ին փոխում:

Տեհած կուլիք:  
Էս թաւուր աղչկերանց մինք շատ  
ինք հաւնում, սրտով կի՛ Չգրոււմ ինք.

տնաբանդներ ին, ասում ինք:

Աբա մարթիքը, վուր ու գլխով աթ-  
մօրթիքը, վուր շուրի տիղ փիքը ին  
փոխում—ան էդ է արմանալուն:

Համա արմանքի բան չկայ:  
Վրթանէս Փափագովը, վունցոր ա-  
սում ին, «Մշակն» էլ մոծամէ (վկայ) է,

սովէստն էլ փոխում սէ ..., —համա մինք  
էլ մարթու անում տւինք ան:

Մեղայ Աստուծա՛:  
Էջմիածնի համբա՛ն, էլ խօմ լսիլ  
իք. վրիշը... էլի վուր լաւ է էլի:

Էս տարի ասում էին վուր՝ միթօմ  
թէ կաթողիկոս ին ուզում ջոգի, կօտէ,  
աշխարհականին ան վարթապետին:

Բագրատ վարդապետը, վուր Աս-  
տուծ գիղենայ խիստ լաւ օքմին է,  
էրազ էր տեհի, վուր միթօմ թէ ինքը  
կաթողիկոս է դառնում... «Մշակի»  
ընդախցիում:

Մեարուպ մագիստրոսն էլ էտէնց է-  
րազ էր տեհի, միթօմ թէ օխնւում է,  
ու գլխին ձեռք ին դրի միթօմ Լէօն  
ու Մելիքովը, համա վրիշը մեռնի շիշ  
թուր էր Մելիքովի հանգի ու Մելիքո-  
վի հիգ:

Խիզ՝ Օրմանով Մալաքիա էպիսկո-  
պոզն էլ լաւ էրազնիր էր տեհի ու  
տեհնում է ան:

Իս կի պակաս էրազնիր էի տեհ-  
նում:

Մէ գիշիր մէ լաւ էրազ տեհայ, մի-  
թօմ թէ իս ու միր դաստի մարթիքը՝  
ան Միտա Ձին, Ղալայչին, էգուպուս  
ծայրահիղ Վարթապետը, Փարեմուզը,  
Ճնդրիկ ափեղան, Տալաչին, Բախ-  
շօն, Լիլիպուտը, Խենթը, Տու-  
տուցը, խելօքն ու անխիբը գիփ միա-  
նայ մէ լաւ քէֆ էինք անում—ու մէ-  
բաշ, միթօմ, քէֆի ժուզը կարկուտ  
էկաւ:

Էս կարկուտի համա հիմի կախէթու-  
մը մէ մաշինա ին մօզօնի:—Ով ու-  
զում է վուր իրա բազում ան արտում

կարկուտ չգայ—մաշինիցի վարկեցի  
նում է:

Ասինք տրաքեցնելու բանիրը «Հո-  
րիզոն»-ն էլ լաւ գիղէ. մէ-մէ ջէր հեստի  
բանիր է տրաքեցնում, կօսիս խալբը  
ախմախ է ու վունչին չի գիղում:

—Մինք էինք, կօտէ, վուր չալիշ է-  
կանք, կօտէ, ու Սուրէնովին կաթողիկոս  
ջոգիլ տւինք, կօտէ:

Աբա սա տրաքոցնիր չէ՞:  
Վունցոր «Մշակը» սրտով Օրմանո-  
վին չէր ուզում ու խաթրու համա

վրիշը նրա անումը տւից, էնէնց էլ  
«Հորիզոնը» Սուրէնովին չէր ուզում  
ու վախաշարի անունը ու էն էլ «մէժ-  
դու» պրօշիմ ասեց:

Համա խօսք է էլի:  
Հա էն էի ասում, Աստուծա՛ վուր էս  
մէ ջէր էլ հաւուց ասկին խղճաց:

Էջմիածնում կաթողիկոս ջոգւից միր  
Սուրէնովը:

Ձիւ մէ քաղքցի հոքուր տիրուջ  
ուստ էկանք էլի:

Ղուրթ ու ղուրթ. էն ինչ էր տօ,  
բերում էին օսմանլի հուղիցը ումը  
ասիս՝ սա հայրիկ է, կօտէ, մայրիկ էր  
դառնում, սա էրկաթ է, կօտէ, բմբուլ  
էր ըլում:

Հիմի փառք Աստու, վունց հայրիկ է վունց  
էրկաթ վունց օսկի է, վունց էրծաթ.  
էլի միր քաղքի վուրթի է, ու էգէբա  
վուր սա ուփրօ լաւ էլաւ:

Տա Աստուծա՛, վուր լաւ ըլի ու մա-  
ղարիչն էլ խօմ կուլի ու կուլի:

Խաթարալա ամեն հայոց  
Գապարճաղա Կալասուզով

ԳՈՒՆԻ ԳԻՏԷ՞Ր

Դուք գիտէք այն սէրը,  
Որով զեփուր ծաղկին,  
Ծաղիկը զեփուրն է սիրում...


Դուք գիտէք այն սէրը,  
Որով ցող ծաղկին,  
Ծաղիկը ցողին է սիրում...

Կամ գիտէք այն սէրը,  
Որով շող ծաղկին,  
Ծաղիկը շողին է սիրում...

Ես այդ սիրով, ծաղկի սիրով,  
Ցողի սիրով, շողի սիրով,  
Ես սիրում եմ երազով...

Գ. Գարգուցի





# Հասանալու ճարը

Իսկական ողբերգութիւն 2 գործողութեամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Նա—ամուսինը, քաւթառ ծերունի:  
Նէ—նրա ջանիւ և, ցաւակցաբար գեղեցիկ կինը:  
Բժիշկ—սովորական բժիշկներից մէկը:

## I

Նէ.—Անպէտք, գարշելի ծերունկ: Ա՛խ, ինչպէս վատ եմ զգում ինձ...

Նա (զմայլած).— Հոգեանկա, ի՞նչ եղաւ քեզ: Է՛յ, Նաստեայ, նաշաղիբնի սպիրտ բեր այստեղ: Ծնւտ, հասիբ. ազլիկալարոնիդ քէֆը խարաբ է:

Նէ.—Ինչո՞ւ էք աղախնին զուր տեղը կանչում: Նա իմ ցաւին կարո՞ղ է դարման անել... Ա՛նախ, (12 հատ ջանը սարսեցնող հոգեոցներ):

Նա.—Մանեա, Մանիկա, Մանեակիկա, Մանեակ-ջանիկա: Քեզ անսիրտապէս բժշկի մօտ եմ տանելու:

## II

Նա (իր կնոջ հետ բժշկի առանձնասենեակը մտնելով).— Ահա, պարոն բժիշկ, սա հիւանդ է, անտղեցէք և բժշկեցէք...

Նէ (ցաւատանջ ձայնով).— Ա՛խ, ես խիստ տանջում եմ:

Բժիշկը (զարկերակը շօշափելով, լեզուն

քննութեան և մարմինը տեղ-տեղ թրխկման ենթարկելով).— Դատարկ բան է, կանցնի: («Նրա» ականջին փսփսալով) Աշխատեցէք ձեր աղջկան շուտով մարդու տալ...

Մթոններէնց՝ Գ. Բ.

### ՀՆՏԿԱԿՆ ՏԵՌՆԵՐԻ ԸՆԿՆՆՈՐԻ ԺՈՂՈՎԸ

Ժողովը բացեց տառերի աւագագոյնը՝ Ա և առաջարկեց ժողովի համար նախագահ և քարտուղար ընտրել: Բոլոր տառերը միաձայն ընտրեցին նախագահ Թ-ին, իբրև ամենից մեծ և քարտուղար՝ նախագահի կողքին բազմոց և ոչ մի բանի մէջ չխտանուող Ժ-ին:

Թ. կնճիթը վեր քաշելով նստած տեղից կանգնեց և սկսեց մի երկար ձառ, որի մէջ ի մ ջի այլոց ասաց հետևեալը.

«Յարգելի պարոններ, այսօր հայկական տառը ողորմելի դրութեան մէջ է, իր աննորմալ և անհաստատուն շրջանումն է ապրում: Ով ինչպէս ուզում է, այնպէս է արտաքսում ու փոխարինում է մեզ մէկը միւսով. ի՛նչ է մեր դրութիւնը: Ինչո՞ւ այնպէս մեծ-սած մարդիկ մեզ՝ մանր տառերիս հետ աղպէս անխղճաբար են վարում: Մթթէ այդպէս են կարգադրել մեր հայրերը՝ Մահակը և Մեղրովը: Ո՞վ է Սա. Մալխասանը, որ մի գրչի շարժումով մեզ, տառերիս, որ դժբախտութիւն ենք ունեցել հայկական տառեր կոչելու, տապալում է և մէկը միւսով փոխարինում ու մեր ինք-

նասիրութեանը դիպչում (բարձրագոյնի կողմից եռանդուն ծափահարութիւն): Մի կախոյ նկրուդ՝ Օ, ուրիշ երկրից և օտար հողից եկել է և ուզում է Սեղաբ Թառայեանի անընկեր «Ընկերի» միջոցով մեր յայտնի և Սահակ—Մեղրովի սիրած Ռ-ին փոխարինել...

Օ.—Պարոններ, ես բո...

Նախագահ.—Լսիր, ես դեռ խօսքս չեմ վերջացրել:

Վ.—Պարոն, անձնաւորութիւններ չըլիշել...

Նախ.— Ամօթ է, վերջապէս: Վաղն էլ կարող են վեր կենալ և մի ուրիշ տառ փոխել. անձանօթ երկրներից ուրիշ տառերի շորեր բերելով՝ մեզ բոլորովին կերպարանափոխել:

Լ.—Պարոններ, դուք զգեստներին ուշադրութիւն միք դարձնի. ահա, ես, ֆրանսիական զգեստ եմ հագնում, բայց կոչումս նոյնն է:

Չ.—Պ. նախագահ, հերթը իմն է, (դառնալով Լ-ին), դուք, յարգելի օրիորդ, շատ ճիշտ էք ասում, կոչումն է մեզ հարկաւոր, բայց ի՞նչ կանէք, երբ մեզ կոչումից էլ են զրկում. Թառայեանը կամենում է Ռ-ին Օ-ով փոխարինել, Մալխասանը ուզում է Ի-ի տեղ Վ դրել... և այդպէս մեզ ձեռքի խաղալիք են դարձնում:

Յ.—Էհ, պարոններ, ամենից վատ դրութիւն իմն է. ինձ բոլորովին արտաքսում են ձեր շրջանից (լալով), ռը կարող եմ գնալ... եթէ «Նոր-Դարը» լինէր, գոնէ

## Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

### Ն Ը Պ Ը Ս Տ Ը Կ Ն Ե Ր Ը

(Քեռի Մարկոսի պատմածներից)

—Նու, տղերք,—ասաց քեռի Մարկոսը,— այս անգամ ես ձեզ շատ հիտու չեմ տանելու, այլ կը պատմեմ կովկասում ինձ հետ պատահած մի դէպք, իմ ընկեր Ավօի կենդանութեան ժամանակ:

Ամառ էր և մենք գտնուում էին ամառանոցներից մէկում: Պէտք է ասել ձեզ, որ այդ ամառանոցի շուրջը վխտում էին նապաստակների ահագին խմբեր, որովհետև ամառանոցատուները մէջ ոչ մի հատ որսորդ չկար և նոքա ազատ ու անվախ կարող էին ապրել, մանաւանդ, որ մենք էլ որսի չէինք դուրս գալիս:

Մի օր, ես դուրս եմ գալիս դաշտը զրօսնելու և մի քանի քայլ չարած, յանկարծ տեսնում եմ գետնին, յետևի թաթերի վըրայ նստած մի նապաստակ, որը ամենայն եռանդով առաջի թաթերովը սրում էր իր բխերը: Ես առաջ էլ գիտէի, որ նապաստակները յայտնի ֆրանսիներ են և մեր երիտասարդների պէս մեծ ուշադրութիւն են դարձնում իրանց արտաքինի վրայ, բայց այդ բանը ուղղակի զարմացրեց ինձ. նա-

պաստակ՝—և բխերը սրե՛լ... Տեսնելով այդ բանը, իմ շարժումս յանկարծ մի միտք ծագեց, որը սկիւրի ևս ամբաստանեց, երբ մի մի քանի օր շարունակ դիտելով, տեսայ որ նապաստակը, ամենայն օր, միևնոյն ժամին, միևնոյն տեղը նստած, շարունակ սրում է բխերը:

Եւ մի օր ես վերցրի հետս մի փոքրիկ հայելի, ոչ այնքան երկար, ծայրը բարակ փայտի կտոր, մի կտոր թուկ և բխերի բնատ, որով մեր ֆրանսիները իրանց բխերին ցանկացած տեսքն են տալիս: Այդ բոլորը կոնաստակս առնելով ես գնացի այնտեղ, որտեղ սովորակար ամեն օր տեսնում էի նապաստակին, հայելին ամբարցրի գետնի վրայ, կանգնած դիրքով, կողքին տնկեցի սրածայր փայտը, նրանից էլ կապեցի թուկը, որի ծայրին ամբարցրած էր բխերի բնատը, յետոյ հայելու առաջ գնելով մի մի թղթի կտոր, որի մէջ շրտած էր բնատի գործածութեան եղանակը,— հեռացայ այնտեղից:

Միւս օրը, վերցնելով հետս Ավօյին, եկանք այդտեղ և հեռուց նկատեցինք հետևալ տեսարանը. նապաստակը, բնատը բխերի տարցրած, յետևի թաթերի վրայ նստած էր հայելու առաջ և դիտում էր իր դէմքը: Ավօն քիչ էր մնացել ծիծաղից թուլանալ:

—Դէ, Ավօ, ապա մի ցոյց տուր շնորքդ,

—ասացի ես:

Այդ ժամանակ նապաստակը յանկարծ նկատեց մեզ և ուղեց փախչել, սակայն չկարողացաւ, որովհետև ես բնատը այնպէս վարպետութեամբ էի կապել թուկից, որ բաւական էր նա շարժել տեղից, իսկոյն հուպ էր գալու և նապաստակը մնալու էր փայտից կապած: Այդպէս էլ եղաւ:

Տեսնելով, որ ազատելու հնար չկայ, նա հանգիստ կերպով դարձեալ նստեց յետևի թաթերի վրայ, կարծես թէ ոչինչ չէր պատահել և սկսեց նայել մեզ վրայ:

Մինչ այդ, Ավօն վերցրեց ուսից հրացանը, նշան բռնեց և...

Տրախխ...

Երբ հրացանի ծուխը ցրեց, մենք մնացինք սառած, տեղներս կանգնած. բանից դուրս եկաւ, որ Ավօյի գնդակը դիպել էր թուկին, կտրել, իսկ նապաստակը, բնատը բխերին ամուր կապած, փախել, անայտնացել էր:

Մենք քոռ ու փոշման վերադարձանք տուն:

Անցաւ երկու օր:

Մի անգամ առաւօտեան, երբ ես ըստ սովորականի դուրս էի եկել զրօսնելու և անցնում էի վերոյիշեալ դաշտի մօտից, յանկարծ առաջս ցցւած տեսայ նապաստակների մի մեծ խումբ, մօտաւորապէս 40—50 հատ: Բոլորն էլ բխերը դէպի վերև ոլորած

ՅԻՆԻՅԵՅԻՆ

ինձ իր մէջ տեղ կըտար, քանի որ նա էլ չկայ իր գնամ:

Ո.—Մի յուսահատուի, տիկին, դուք ինձ հարկաւոր էք երբեմն, ինչպէս քոյր. դեռ բոլորովին չեն հեռացնի մեզանից:

(Կըշարունակի) Միսս չի



ԿԵՐԵՈՐ ԽՈՐՀՈՐԳՆԵՐ

Պարտքերը նման են երեխաների. նրանք յայտնում են անսպասելի կերպով, անում են աննկատելի կերպով եւ մտատանջութիւն պատճառում խիստ նկատելի կերպով:

Փոքրիկ երեխաներն ու փոքրիկ պարտքերը յաճախ մեծամեծ անախորժութիւններ են պատճառում:

(Ինչպէս երևում է անիծածները բոլորն էլ օգտուել էին իմ բինտից) յետևի թաթերի վրայ նստոտած, ծալրակաւ դէմքերով նայում էին ինձ վրայ և լեզուները ցոյց տալիս, իսկ մէկի բինտերի վրայ դեռ ևս ամբարցրած էր իմ բինտը:

Ախ, եթէ այդ բոպէին ձեռքիս մի հրացան լինէր, ես նոցա բոլորին էլ կըկոտորէի, բայց ցաւը նրանում էր, որ իմ ձեռքիս նոյն իսկ փայտ էլ չկար... Ես կատաղած, գլուխս քաշ գցած ուղեորեցի դէպի տուն, իսկ անիծածները դեռ երկար ժամանակ վազվզում էին առջև, իրանց ատամները ցոյց տալով:

Ահա այդ օրւանից, պարոնայք, ես այլևս երբէք որսի չեմ դուրս գալիս նապաստակների վրայ, վախենալով, թէ մի գուցէ անիծածները դարձեալ մի օյին խաղան զըլխիս,—այսպէս վերջացրեց քեռի Մարկոսը իր պատմութիւնը:

—Բայց, քեռի Մարկոս,—ասաց լսողներից մէկը՝ որը նրա պատմութեան ամբողջ ժամանակը հեղնական ժպիտը դէմքին, լուռ դիտում էր,—ես որքան յիշում եմ, այդպիսի մի պատմութիւն այս քանի օրերս կարդացել եմ առևանգ «Родина» շաբաթաթերթում: Այդ ինչպէս կարող էր պատահել, որ երկու տարբեր անձնաւորութիւնների միևնոյն արկածը պատահած լինէր: Քեռին յանկարծ կարմրեց, յետոյ գու-

Պատասխանին մի րուբլի պարտ լինելը դերձակին հարիւր րուբլի պարտ լինելուց վատ է, իսկ դերձակին հարիւր րուբլի պարտ լինելն աւելի վատ է, քան մուրհակով հազար րուբլի պարտական դառնալը:

Որքան շատ պարտքեր ունենաւ այնքան էլ աւելի երկրպագուներ կունենաւ. պարտատէրերը միշտ ողջունում են իրենց պարտապաններին:

Պարտքեր անելու այս հնա-նորագոյն արեստը կեանքին տուել է մեծամեծ արտիստներ:

Եթէ «պարտապան-արտիստը» իր հոգին բարձրեալ պարտատիրոջն է յանձնում, երկրային պարտատէրերի մէջ նրա «յիշատակը» անջինջ է մնում:

ՀԻՆԻ ՊԵՏԻՐԵՆ

(Եւէր Ֆոկուզնիկ պ. Ջնդանեանին)

1) Վերնագրների գողութիւնը Մովսէսի 9-րդ պատերաւի, իսկ ներկայ դարում 14-րդ статія-ի համաձայն մեղք չէ, և այդ բանը զանազան անյայտ հեղինակներ քաջ իմանալով, միևնոյն վերնագրի տակ արտայայտում են իրենց դատարկ կամ լիքը զըլխներում ծաղած մտքերը:

2) Նոյնպէս մեղք չէ համարում, երբ հեղինակը զանազան հին դաւթարներ քըր-

նատեց, բայց վերջի վերջոյ ինքն իրան հաւաքելով, ստաց:

—Շատ հատարակ կերպով. «Родина»-ի այդ աշխատակցի հետ ես ծանօթացել եմ Պետերբուրգում: Մի օր, նա խնդրեց, որ պատմեմ նրան իմ արկածներից մէկը, որովհետև նի թ չուէր գրելու և ես էլ պատմեցի այս բոպէիս ձեզ պատմածս, իսկ նա էլ գրել է առել և տպագրել:

—Այդ շատ լաւ, բայց այնտեղ միայն մի որսորդի մասին էք գրած, իսկ դուք պատմեցիք, որ ձեզ հետ է հղել նաև Ավօն, որը և կրակել է:

—Ա... այդ արդէն ուրիշ բան է: Գիտէ՞ք, ես դիտմամբ չեմ պատմել նրան Ավօյի մասին, որովհետև ինչպէս գիտէք, նա տաճկաստանցի էր և բացի այդ, անցագիր էլ չուէր և ես վախենում էի, թէ նրա անունը լրագրի մէջ տպագրելուց յետոյ, կարող են քննել, տեսնել, որ նա անցագիր չուէր և դրա համար էլ կըկալանաւորէին: Մի մոռանաք, որ այդ ժամանակ Պետերբուրգում պատերազմական դրութիւն էր յայտարարւած:

—Իսկ ի՞նչ թւականին էք պատմել «Родина»-ի աշխատակցին այդ բանը,—չէր դադարում իր հարց ու փորձը կասկածոտ պարոնը:

—1893 թւականին: —Բայց ինչու պէտք է այն ժամանակ

քրիւս մի թղթի կտորի վրայ: Դեռ քեռիք, գրւածք է գտնում և իսկոյն մաքուր թղթի վրայ արտագրելով վազեցնում մի որևէ թերթի խմբագրին, խմբագրին էլ գովելով հեղինակի տաղանդը, խոստանում է նրա գրւածքը ֆիլիէտոնական բաժին դարձնել և կամ խորհուրդ է տալիս առանձին գրքոյկներով հրատարակել:

3) Ամենևին մեղք չէ բիօգրաֆներում, զանազան դրամաներ կամ կօմիդիաներ տեսնել և իր սեփականութիւն դարձնելով, հրատարակել վաղօրօք թերթերում յայտարարելով ծլկացրած աշխատանքի լոյս տեսնելու ժամն ու բոպէն: (Միայն հարկաւոր է այստեղ վերնագրեր փոխել):

4) Մեղք չէ համարում, երբ մի հեղինակ, մի թերթում մի գեղեցիկ բան կարդալով իսկոյն արտագրում է և մի քանի տարուց յետոյ, իրեն նորութիւն մի այլ թերթում լոյս աշխարհ հանում: (Մեղք չէ միայն այն դէպքում, երբ այդ նորութիւնը առանց ազաւորելու և առանց փոփոխելու է արտասպում):

5) Ամենամեծ մեղք է համարում միայն այն, երբ մէկը մի թերթում մի ժամանակ մի բան է կարդում և մի քանի տարուց յետոյ նոյն բանի սկզբը մի քիչ ազաւորելով, խուզելով ու կրակելով նոյն վերնագրի տակ, նոյն թերթին ուղարկում, դա այնպիսի մի մեծ մեղքերից է, որի մեղադրեալին ոչ թէ զրախտից, այլ վերջերս նոյն իսկ արտաքսում են դժոխքից:

Քանի որ այդպիսի մեղադրեալների

Պետերբուրգում պատերազմական դրութիւն լինէր յայտարարւած:

—Գնդապետ Մինի սպանութեան պատճառով:

Այստեղ լսողները այլևս չկարողացան պահել իրանց ծիծաղը. պարզ էր, որ քեռի Մարկոսը արդէն շփոթւել էր և ինքն իրան բռնել:

Սենտակը լցել էր ծիծաղով, աղմուկով, ամեն կողմից բացականչութիւններ էր որ լսում էր.

—Հա, հա, հա հա...

—Քեռի Մարկոսը բռնեց...

—1893 թւականին...

—Պետերբուրգում...

—Գնդապետ Մինի սպանութեան համար...

—Հա, հա, հա, հա...

—Պատերազմական դրութիւն...

—Հա, հա, հա, հա... Վայ, քեռի Մարկոս...

—Վերջապէս բռնեցիր...

Ընդհանուր աղմուկի ժամանակ քեռի Մարկոսը վեր կացաւ տեղից և գլուխը քարշ գցած, հեռացաւ սենեակից: Իսկ նրա յետևից դեռ երկար ժամանակ լսում էր.

—Հա, հա, հա, հա... քեռի Մարկոս...

Վերջապէս բռնեցիր...

Վ. Բուս.

Թիվն էլ օրըստօրէ աւելանում է և դժոխքում էլ չեն ընդունում ու խեղճերը մնում են բաց երկնքի տակ, ուստի պ. Փափազեանը այդ բանը աչքի առաջ ունենալով Վերին Երուսաղէմում, իր հաշուով մի սարսափելի անդունդ է փորել տալիս, սրայէսզի այդպիսիները այդտեղ ազատ մուտք ունենան և մէկզմէկուց գրութիւններ ծլկացնելով՝ պաշտպանին իրենց գոյութիւնը:

Բախոօ


Datarcus banus.

(20-րդ դարու բանաստեղծութիւններից).

Նէ գեղեցիկ էր, դեռահաս և գրաւիչ...  
 Եւ նստած էր կաթնատան դռան մօտ,  
 իրան նման գեղեցիկ, գրաւիչ և գողտրիկ  
 սեղանի առաջ...  
 Նէ համեստ է... Նէ լուռ է, ինչպէս սե-  
 զանը...  
 Եւ սեղանը ոչինչ է նէրա գեղեցկութեան  
 առաջ...  
 Նա կանգնած էր հետու և նայում էր ..  
 նայում էր և զմայլում...  
 Նա զմայլում էր նէրա կախարդ շրթունք-  
 ներով...  
 Ո՛հ, որքան գեղեցիկ է նախաճաշում...  
 Նէ արթնացրեց նրա մէջ ամենաքնքոյշ  
 զգացմունքները... Նա ուզում էր նէրան ա-  
 սել այն բոլոր քնքոյշ բառերը, որոնք ասել  
 է այլ գեղեցիկ կանանց...  
 Եւ, իհարկէ, ոչ այդքան գեղեցիկ կա-  
 նանց...  
 Նա ուզում էր ասել՝

— Ո՛հ, իմ հրեշտակ, ես կուզէի համբու-  
 րել քո վարդազոյն շրթունքներդ, նայել քո  
 զարմանալի աչքերիդ... Ախ, ընկնել ծնկաչոք  
 քո առաջ և աղօթել քեզ վրայ...  
 Մակայն նէ հասկացաւ...  
 Նայեց... նրա կողմն, կարծես թէ բան է  
 ուզում ասել...  
 Այո, երևի նէ հասկացաւ խեղճ երիտա-  
 սարդի զգացմունքը... Նէ բացում է իր գե-  
 ղեցիկ շրթունքները... Նէ ասում է՝  
 — Տղայ, ձեզ եմ ասում, տւէք ինձ մի  
 բաժակ կաթ և պօնչիկ...  
 Նա ? ?...  
 Նէ ! !...

Լուսնու № 30-ից



ՕՏԱՐ ԻԻՄՕՐ.

ՍԻՐՈՅ ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ

(Փրանսիական երգիծանք)

1. Քարէ դար.

Սէրը քարէ դարում ևս գոյութիւն ու-  
 նէր. բայց այն ժամանակ մարդկանց ու  
 կանանց սրտերը քարից էին և այդ պատ-  
 ճառաւ էլ կոտրւած սիրտ սասձ բանը բո-  
 լորովին չկար: Ջրային գրգռուունքների ժա-  
 մանակ կանայք ուղղակի սալաքարեր էին  
 շարտում իրանց ամուսինների վրայ:

2. Ոսկէ դար.

Դա առասպելական մի բախտաւոր դա-  
 րաշրջան էր, երբ անարատ ստուածներն  
 աշխատում էին հասարակ մահկանացունե-  
 րի կանանց իրանց կողմը գրաւել: Հասար-  
 ակ մահկանացունքներն այն ժամանակ այն-  
 քան անմեղ ու միամիտ արարածներ էին,  
 որ այդ բանում նրանք ոչինչ վատ բան  
 չէին տեսնում, և գտնում էին, որ դա այդ-  
 պէս էլ պիտի լինի:

3. Հին ափսարհագր.

Մարդիկ եգիպտոսում կնոջը պատկերաց-  
 նում էին սֆինքսի տեսքով, և նրան այն-  
 չափ հանելուկային էին համարում, որ նոյն  
 իսկ չէին ձգտում լուծել այն. դրա համար  
 էլ այդ կողմերը կանանց հարցի վերաբե-  
 րեալ ոչ մի գիրք չի գրւել:

Իսրայէլացիների մօտ կանայք իրենց  
 ցեղի տղամարդկանցից միանգամայն գոհ  
 էին և կարիք չէին զգում իրենց սպանու-  
 հի կամ ֆրանսուէի ձևացնելու:

Մինչև գեղեցիկ Ելենայի երևան գալը՝  
 Հին Յունաստանում կանայք օրինակելի ա-  
 մուսիններ էին հանդիսանում և իրենց  
 տղամարդկանց կեանքը երկու կերպ քաղց-  
 րացնում՝ սիրով և յունական հայրա և  
 բահաթ-լոխամ պատրաստելով:

Հին Հռոմում կանայք սկսեցին աւելի  
 շատ շորերի և զարդարանքների ետևից  
 ընկնել, քան սիրոյ, դրա համար էլ հոռ-  
 մայեցիք սկսեցին ամուսնութիւնից խուսա-  
 փել և դրանից է, որ կաֆէ-շանտաններ  
 սարքելու պահանջ զգացեց:

4. Միջին դարեր.

Միջին դարերում սէրն ասպետական բը-  
 նոյթ է կրել: Տղամարդիկ բուականանում  
 էին կանանցից ստացած ընծանւրով որպիսիք  
 են՝ բէզլինէ ոտակապիչներ, ժապաւէններ,  
 ժապաւինափողկապներ, վզի թաշկինակներ  
 և այլն: Այնուամենայնիւ որդէծնութիւնը  
 նշանաւոր չափով մեծացաւ:

5. Նոր դարեր.

Վերածնութեան ժամանակն ըր սէրն ա-  
 ւելի մեծ իրաւունքներ սկսեց զբաւել. դրա  
 պատճառն այն էր, որ Մարտին Լութերի  
 օրինակին հետևելով՝ բողոքական դարձած

վարդապետներն անդամ ամուսնանալ սկսե-  
 ցին:

Նախապէս մուսկէտոնկիները ինքն ինք  
 րային պատմութիւններ ունեցած՝ Աւս-  
 տրիական Աննան գաղտնի կերպով կարդի-  
 նալ Մազարինայի կինը դարձաւ:

Լիւդովիկոս 14-ը սէր էր քարոզում Մա-  
 դամ-Մոնտեսպանին և ուրիշ քանի մի բարձ-  
 րաստիճան տիկնանց:

Սէրն սկսեց տարեգրութիւնների մէջ ա-  
 հագին թւով էջեր մտցնել, իսկ Մոլիէռն  
 առաջինն էր, որ իր թատերգութեանց մէջ  
 յիմարացրած տղամարդկանցը սեղանների  
 տակ թագցնել ձենսարկեց:

Թարգմ. Գ. Բաբուրեանց

Բ Ա Ր Ի Ս Ր Ը Տ

— Ողորմութիւն արէք, պարոն...— ասաց  
 մի աղքատ կին պատառուած շորերի մէջ  
 կուրլուած, մօտով անցնող մի երիտասարդի:

Երիտասարդը այդ երկրի մի հարուստ  
 յայտնի խանի որդին էր, որ խզճալով աղ-  
 քատ կնոջը, հանեց գրպանից տասը հատ  
 ոսկի լիրա և տւեց աղքատ կնոջը: Աղքա-  
 տը, որը այդպիսի մեծ գումար երբէք չէր  
 տեսել, մնացել էր շշուշուած և չէր իմանում,  
 թէ ինչ կերպ յայտնի իր շնորհակալութիւ-  
 նը: Վերջապէս սիրտ առաւ և շնորհակա-  
 լութեան փոխարէն տւեց երիտասարդին  
 հետևեալ խրատը.

— Ես իմ կեանքում այսպիսի մեծ գու-  
 մար իբրև ողորմութիւն չեմ չեմ ստացել,  
 այժմ, երբ դու ինձ այսպիսի լաւութիւն  
 ես անում, փոխարէնը կըտամ քեզ մի խը-  
 բատ. այն է, որ միշտ զգոյշ լինես կա-  
 նանցից և որ գլխաւորն է նրանց շատից.—  
 ասաց աղքատը ու հեռացաւ:

— Է՛հ, մայրիկ ջան, կանայք ինչ են, որ  
 նրաց շառը ինչ լինի,— կանչեց երիտասար-  
 քը ծիծաղելով աղքատի ետևից:

Այդ բոպէին փողոցով անցնում էր մի  
 կին փաթաթւած չարսոււի մէջ. վերջինս  
 երբ լսեց երիտասարդի վերաւորական խօս-  
 քերը, մտքումը ասաց. «Ի՛նչ լաւ, ես քեզ  
 հիմայ ցոյց կըտամ, թէ կանայք ինչ են և  
 նրանց շառը ինչ»— ասաց կինը ու չարսու-  
 ւը հեռացրեց զէմբից:

Երբ երիտասարդը շուտ եկաւ, ինչ տե-  
 սաւ, մի գեղեցիկ, չքնաղ կին... նա վրձ-  
 ոնց ինչ էլ որ լինի ծանօթանալ այդ կնոջ  
 հետ և սկսեց հետևել նրան: Նա գնում էր,  
 իսկ տղան էլ նրա ետևից: Կինը շարունակ  
 յետ-յետ իր նայում: Մի քանի անգամ այս-  
 պէս յետ նայելուց յետոյ դանդաղեցրեց  
 քայլերն ու գիմելով երիտասարդին ասաց.

— Այ, ջանք, ինչ՞ու էք յետևիցս գալիս,  
 մօտ եկէք, կողք-կողքի գնանք:

Երիտասարդի ուրախութեանը չափ չկար.  
 «Տէնց սա է, որ գտել եմ», մտածեց նա ու

\*) Մուսկէտոնկի են կոչւում հրացանակիր պատ-  
 դամուսները. մուսկէտը պատրուզաւոր հրացան է:





—Իսկապէս, ասած տննօրը ինձ դիր է գալի:  
 —Ինձ բարիտունը անցի է հմայում, բայց զարմանալի է, որ ոչ մի գեղեցիկ ու կոկ կին արտիստ չունեն—Ինչերի նմաններ են տե՛ս է՛, կան որ բռնկաների են նմանում, կան որ չփեղկալէս են:  
 —Այս տարայ խմբի կանայքն ինձ էլ չեն դուր գալի:



—Ո՞ր գէ՛մ չե՛մ մեր ամուսնութեան, բայց չե՛ որ ես էլ ե՛մ մեր սիրում:  
 —Այդ գէտըստ, ճորագործը, դու ինձ ովքեր գիշեր մեղրամանից յետոյ, կուզես նըշտելը քոնը լինի, ես էլ գէ՛մ չե՛մ լինի:



Քէֆից յետոյ

Դեռ էլի չե՛մ կարողանում լինել թէ երեկ ինձ ինչ պատահեց—պատկեցիք... բայց ուր է կինս, ինչի ես մենակ եմ... Թէ չպատկեցի, ո՞ր բաս ինչի եմ ինձ այսպէս վատ տրամադրւած դրում:

առաջարկեց փակ կառքով գնալ. կինը համաձայնեց, մինչդեռ երիտասարդը յայտնում էր իր սէրը, սիրուն կինը խնդրեց կանգնեցնել կառքը, որովհետև արդէն հասել էր, միայն մի փոքրիկ նրբափողոց էր մնացել, որ հասնէր նա իր տան դռանը:

Երիտասարդը բռնելով կնոջ թևից ցած իջեցրեց կառքից, թէև կինը արդէն շնորհակալութիւն էր յայտնում ուղեկցութեան համար, բայց երիտասարդը խնդրեց մինչև տան դուռը ուղեկցել: Դրան ևս համաձայնեց գեղեցիկ կինը: Այս անգամ նա վերջնականապէս յայտնում էր իր խորին շնորհակալութիւնը, բայց երիտասարդը չէր ուզում հրաժարուի մի այդքան չքնաղ կնոջից, ուստի խնդրեց ներս մտնել նրա բնակարանը: Դարձեալ համաձայնեց կինը: Եւ նրանք երկուսով մտան ներս:

Ծառան տեսնելով իր տիկնոջ հետ օտար պարոնին, շատ զարմացաւ:

—Ահմադ, գնա շուտով սեղան պատրաստիր, «Տօրիզըօրս որդին» քաղցած է, —ասաց կինը ծառային:

Կէս ժամ չանցած նրանք նստած էին ճաշի սեղանի շուրջը ու քաղցր մասլահաթներ էին անում:

Երիտասարդը ցանկանալով աւելի հաճոյանալ կնոջը, անեկդոտներ էր պատմում. իսկ կինը պատմում էր նրան իրենց տնային կեանքից. այսպէս էր ասում.

—Ամուսինս սպայ է, շաբաթներով տուն չի գալիս, ժամանակը անց է կացնում արբեցողութեամբ, այնպէս որ տուն վերագաւնալիս էլ հարբած է լինում և ինչ որ ձեռքն է ընկնում ջարդում ու փշրում է:

Դեռ չէր վերջացրել խօսքը, որ լսեց դռան ձայնը, որ քիչ էր մնում ջարդելի:

—Ամուսինս է... սաստիկ հարբած կըլինի... հիթէ քեզ տեսնի այստեղ երկուսիս էլ կըսպանի, ի սէր Ալլահի մտիր այս սընդուկը...

Երիտասարդը մտաւ սնդուկը. կինը կողպեց և բանալին դրեց գրպանը: Սեղանը արագ-արագ հաւաքեց և սուս ու փուս նըստեց իր տեղը:

Ամուսինը ներս մտաւ, հանեց զինւորական շորերը, թուրը, ասրճանակը և կախեց պատից, յետոյ համբուրեց կնոջը ու սիրալիբ կերպով ասաց.

—Ապա, սիրելիս. ես շատ քաղցած եմ, հրամայիր ինձ ճաշ բերես: Ես ուզում եմ շուտով քնել, որովհետև սաստիկ յոգնած եմ:

Մի քանի բոպէից յետոյ նրանք քաղցր ճաշ էին վայելում: Երբ փլաւի տակի կարմրած ձուտը մաքրազարդեց, կինը դառաւ ամուսնուն ու ասաց.

—Ալի, արի գրազ դանք, եթէ ես տանեմ, դու ինձ համար մի ձեռք նոր շորեր գնիր, իսկ եթէ դու տարար, ես քեզ համար մի ասեղնագործ ֆաս կըգործեմ:

Ալին, որ շատ էր զարմացած կնոջ այս սուրայ անսովոր ուրախ տրամադրութեան վրայ, համաձայնեց:

—Գիտես ինչ, Ալի, —սկսեց կինը, —այսօր երբ ես վերագաւնում էի մէջիդից, ինձ պատահեց փրան խանի տղան և սկսեց հետեւել ինձ: Ես դառայ նրան ասացի. «Այ, ջանք, ինչի՞ ես յետևիցս ընկել, արի կողք-կողքի գնանք», նա համաձայնեց ու մենք միասին գալիս էինք...

Այս խօսքերը լսելով Ալին վեր ցատկեց տեղից, խելագարի պէս վրայ պրծաւ ասրճանակին և ուզում է կնոջը անդուռտեղը սպանի, բայց կինը հանգստացրեց նրան:

—Դեռ խօսքս վերջացնեմ, յետոյ սպանում ես սպանիր:

Ալին նստեց:

—Յետոյ, շարունակեց կինը, —երբ մի քանի փողոց անցանք, նա առաջարկեց ինձ նստել փակ կառքի մէջ, ես համաձայնեցի:

Այստեղ արդէն Ալին չկարողացաւ համբերել և սարսափած ատրճանակը ուղղեց դէպի կինը: Բայց կինը խորամանկութեամբ դարձեալ հանգստացրեց մարդուն:

—Դիմի մէկ է, դու ինձ պէտք է սպանես, գոնէ լսիր բոլորը և յետոյ ինչ ուզում ես արա:

Եւ շարունակեց պատմել մինչև ամուսնու տուն վերագաւնալը և խանի տղին սնդուկի մէջ պահելը ու պելացրեց.

—Եթէ չես հաւատում, ահա վերցրու բանալին, բաց սնդուկը և ինքդ տես:

Ներսից կարմրած Ալին խից կնոջից բանալին. ուզում էր բանալ սնդուկը, կինը բացականչեց.

—Գրագը տարայ, տարայ...

Ալին այստեղ իմացաւ որ կնոջ ասածները սուտ է, հանգստացաւ ու գնաց իր սենեակը քնելու:

Կինը տեսնելով, որ Ալին քնեց, կանչեց ծառային և հրամայեց սնդուկը տանել բակը ու բանալ, ինքն էլ հետեց նրան:

Ծառան տարաւ սնդուկը ու բացեց և ինչ, դուրս եկաւ մի դեղնած մարդ...

Նա ուշաթափած էր: Երբ կինը Ալու հետ հանաք էր անում, երիտասարդը վախից ուշաթափուել էր: Իսկոյն հրամայեց ծառային ջուր ածել սղի վրայ: Խեղճին մի լաւ սառը վաննայ ընդունել տարուց յետոյ արձակում են:

—Այ, պառաւ, թրտիկ ես, —ասաց տղան ուշքի գալով, —արի մի երկու լիրա էլ տամ, որ դու այդքան խելօք բան էիր սովորեցնում ինձ, իսկ ես չուզեցի սովորել:

—Դէ գնայ, —ասաց կինը, —որտեղ քոնը ասես, այնտեղ էլ իմը ասա, ու սրանից յետոյ կանանց մասին այդքան թերի մտքեր չբանեցնես:

606

ՄՏԵՐ ԵՒ ԱՓՈՐԻՔՆԵՐ

Միայն ուրիշի աչքերով կարելի է սեփական պակասութիւնը տեսնել:  
Զինական ստաճ

Ճշմարիտ հօրը նա է, որ յաղթում է ինքն իրան:

Արեւելեան իմաստ

Ոչինչ արտադրող գիտունը նման է անձրևի չաւոզ ամպի:

Սոյն

Խիստ եղէք դէպի ձեզ և ներողամիտ դէպի ուրիշները, և դուք թշնամիներ չէք ունենալ:

Զինական իմաստ

Իմաստունին հարցրին թէ՛ ի՞նչ բան է գիտութիւնը. նա ասաց՝ մարդկանց ճանաչելը: Նորից հարցրին թէ՛ ինչ՞ով է կայանում առաքիտութիւնը. նա ասաց՝ մարդկանց սիրելու մէջ:

Սոյն

Ով որ իրան ճանաչում է՝ նա Աստուծոյ է ճանաչում:

Արեւելեան ստաճ

Մեծ և գեղեցիկ հոգի ունեցող մարդիկ միշտ ուրախ են և բաւական. իսկ աննշան հոգի ունեցողները շարունակ անբաւական և տխուր:

Մանջուրական ստաճ

Կեանքն այն ուսումնարանն է, որտեղ անյաջողութիւնն աւելի լաւ ուսուցիչ է, քան յաջողութիւնը:

Գրանալոցի Սուլէյման

Ամբողջ աշխարհը և նրա մէջ եղած ամեն բանն էլ գեղեցիկ է, բայց աշխարհիս երեսին ամենագեղեցիկ բանը՝ առաքինի կինն է:

Մանվէդ

Որքան լուսաւոր է գլուխը, այնքան խաւար է հայեացքը. որքան լիքն է սիրտը, այնքան դատարկ է գրպանը. որքան խեղճ են հեղինակները, այնքան հարուստ են հրատարակիչները:


Սաֆիր

Եթէ կասկածում ես՝ զսպիր քեզ:  
Զրադաշտ

Դասաւոր. — Դուք ինչով կարող եք արդարանալ... չէ՞ որ ինքը սուրիկանապետն է բռնել ձեզ յանցանքի ժամանակ:

Մեղադրեալը. — Ինձ համար էլ շատ հետաքրքիր է այդ իմանալ:





### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՍՏՊՈՆ «ԳԻՐԱՆԻՆ»**  
 — Ս. ԲԱԼԼԵ ԵՐ ԸՆԿ. ՄՈՍԿՈՆ —  
 Պաշտօնը Թիֆլիսում, Գալախնակ. պր.  
 — Պահանջեցէք ամենուրեք —  
 52—4

## Ա. \ Տ. „ԳՐԱՄՄՈՓՈՆ“ ԸՆԿ. Գ. Ս. ԴԱԽԻԴՈՎ.

(Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպ. Ժողովարանի տակ)  
ԳՐԱՄՄՈՓՈՆՆԵՐԻ ԵՒ ՊԼԱՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁՍԿ  
ՊԱՀԵՍՏԸ ԸՄԲՈՂ, Զ ԿՈՎԿԱՍՈՒՄ.

Անգլիական գրամոֆոնների և պլաստիկանների բազմաթիւ նորութիւններ Լոնդոնի ամենավերջին մոդէլներով:



Պատկան ծառայութեան մէջ եղողները կարող են մաս-մաս վճարել:

2—2



## Первокл. ресторакъ „АННОНА“



„Здание Архитектическаго Общества“  
**Сод. Я. Т. Кондаренко** Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—Г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.  
**ЗАВТРАКИ** отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биліарды. Имѣются кабинеты.  
 Получены Сибирскіе рябчики и устрицы.

52—29

Հոյս տեսաւ եւ վաճառուս է



## ՇԱՀԱՆՈՒՅԻ ԻՍՏՕՐԻԷՆ

ԳԻՆՆ Է 5 Կ.

Իրմի՛ Կятигорскъ, типографія Су-кіасянцъ и Лысенко. Мамиконяңцу Փողի տեղ կարելի է ուղարկել փոստային մարկաներ:

ФАБРИКИ  
**АЭНФИАДЖІАНЦА**  
 ПАПИРОСЫ  
**ИНТЕЛЛИГЕНТНЫЯ**  
 ЦѢНА  
 25 шт. 15 к.  
 10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ  
**ЭКСТРА**  
 15 шт. 6 коп.  
 ФАБРИКИ  
**АЭНФИАДЖІАНЦА**

ПАПИРОСЫ  
**ГОЛУБКА** 10 шт. 3 коп.  
 ФАБРИКИ  
**АЭНФИАДЖІАНЦА**

**„Джіоконда“**  
 «ԶԻՈՎՈՆԴԱ»  
 Մ Ո Ն Ա Լ Ի Ջ Ս Յ Ի  
 դիւթիւն հմայքը  
**Ծրոքար և Կ.**  
 ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.  
 մարմնացրել է  
**„ԶԻՈՎՈՆԴԱ“**  
 հոր ՕԻԸՎՈՒՆԻ բուրմուռերով:  
 2—1

ОСКАР.  
ШАИНГ.

ՅԵՐԵՎԱՆ  
ԶՈՅՔՈՐԱԳՐԱՆ



—Եթէ արդար է, ի՞նչի չէ կարողանում գլուխը ազատել անարգական սիմից:  
(Եւէր Օրմանեան սրբազանին)



Ս Է Ր Ն Ե Ն Փ Ն Ց Ր Ո Ւ Մ  
Հ Ա Ր Ո Ւ Ս Տ Ա Յ Ր Ի Կ Ն Ո Ջ ...